

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝**

**ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող «Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» և «Եղեգնաձորի երաժշտական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների ընտրության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար**

Տնօրենի ընտրության (նշանակման)

1) պարտադիր պայմաններն են՝

ա. բարձրագույն կրթություն՝

«Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ՝ «Պատմություն և հնագիտություն » մասնագիտությամբ

«Եղեգնաձորի երաժշտական դպրոց» ՊՈԱԿ՝ «Երաժշտական արվեստ և կատարողական արվեստ» մասնագիտությամբ

բ. ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

գ. իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր).

դ. կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգ, հիմնադրույթներ մշակելու կարողություն,

2) լրացուցիչ պայմաններն են՝

ա. ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

բ. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

գ. տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

դ. աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ իմացություն.

ե. ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ Էթիկայի կանոնների իմացություն.

զ. առնվազն մեկ օտար լեզվի իմացություն,

**Մրցույթը կկայանա 2017 թվականի հուլիսի 28-ին՝**

**«Եղեգնաձորի երաժշտական դպրոց» ՊՈԱԿ ժամը 11:00**

**«Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ ժամը 14:00**

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնող Աշխատակազմին ներկայացնում են՝

1) դիմում.

2) մեկ լուսանկար 3x4 չափսի.

3) քաղվածք աշխատանքային գրքույկից.

4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.

6) կադրերի հաշվառման թերթիկ (լրացված).

7) տեղեկանք մշտական բնակության վայրից.

8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում).

9) բնութագիր վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել):

9. Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր և պահանջվող փաստաթղթերի բնօրինակները:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 9<sup>00</sup> - 17<sup>00</sup>, բացի շաբաթ և կիրակի օրերից:

***Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2017 թվականի հունիսի 26-ը:***

***Մրցույթը կկայանա Վայոց ձորի մարզպետարանի շենքում (ք.Եղեգնաձոր, Շահումյան 5):***

***Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար, կարող են դիմել ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխարակազմ (ք.Եղեգնաձոր, Շահումյան 5, անձնակազմի կառավարման բաժնի, հեռ.՝ 0281-2-55-95):***